ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.08.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/109

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.07.2018թ. թիվ 03/26-3/12872-18 գրությամբ «Հրաշք Այգի» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 10.07.2018թ. թիվ 01.3/11/504047-18 գրության հիման վրա, 16.07.2018թ. թիվ 03/26-3/12872-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Հրաշք Այգի» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Հրաշք Այգի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Հրաշք Այգի» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2018թ. ապրիլի 18-ի N 3 որոշմամբ հրավեր է ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից անտառային վնասատուների դեմ պայքարի միջոցառումների ծրագրի շրջանակներում թունանյութի ձեռքբերման նպատակով:

Վերոնշյալ հրավերի գնման առարկայի տեխնիկական բնութագրում ներառված են եղել հետևյալ պահանջները՝ 250 գ/լ ցիպերմետրին ազդող նյութով կոնտակտ և աղիքային ազդեցության բույսերի պաշտպանության միջոց՝ գրանցված «Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների» անվանացանկում: Արտադրված առնվազն 2017 թվականի 4-րդ եռամսյակում:

Պատրաստուկային ձևը՝ միջին թունունակ (2-րդ դաս, ըստ ԱՀԿ-ի դասակարգման):

Չափածրարված և/կամ փաթեթավորված գործարանային 5-20 լիտրանոց տարաներով, պիտակավորված:

Մինչև պահեստավորման վայր տեղափոխման և բեռնաթափման ապահովում:

Մասնակից «Հրաշք Այգի» ՍՊԸ-ն հրավերի 6.1 հավելվածով ներկայացրել է առաջարկվող ապրանքը հետևյալ տեխնիկական բնութագրով՝ 250 գ/լ ցիպերմետրին ազդող նյութով կոնտակտ և աղիքային ազդեցության բույսերի պաշտպանության միջոց (միջատասպան)՝ գրանցված «Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների» անվանացանկում (Տրիումֆ առևտրային անվանումով):

Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:

Վտանգավորության դասը՝ 2-րդ (միջին թունունակ), ըստ ԱՀԿ-ի դասակարգման:

Փաթեթավորված գործարանային 1 լիտրանոց տարաներով, պիտակավորված:

Արտադրված 2017 թվականի մարտին:

Պիտանելիության ժամկետը՝ մարտ 2020թ.:

Մինչև պահեստավորման վայր տեղափոխման և բեռնաթափման ապահովում:

16.05.2018թ. հանձնաժողովի թիվ 5 արձանագրությամբ «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է հիմք ընդունելով, որ Ընկերության ներկայացրած հայտով առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով ներկայացված տեխնիկական բնութագրին՝ 5-ից 20 լիտրի փոխարեն տարաները եղել են 1 լիտրանոց և արտադրման ժամանակը 2017 թվականի 4-րդ եռամսյակի փոխարեն 2017 թվականի մարտ ամիսը:

Այնուհետև կրկին Հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 16-ի № 2 որոշմամբ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/30» ծածկագրով հրավեր է ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարության կողմից անտառային վնասատուների դեմ պայքարի միջոցառումների ծրագրի շրջանակներում թունանյութի ձեռքբերման նպատակով, որի գնման առարկայի տեխնիկական բնութագրում ներառված են եղել հետևյալ պահանջները՝ 250 գ/լ ցիպերմետրին ազդող նյութով կոնտակտ և աղիքային ազդեցության բույսերի պաշտպանության միջոց՝ գրանցված «Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների» անվանացանկում:

Պիտանելիության ժամկետն առնվազն 18 ամիս:

Պատրաստուկային ձևը՝ միջին թունունակ (2-րդ դաս, ըստ ԱՀԿ-ի դասակարգման):

Չափածրարված և/կամ փաթեթավորված գործարանային տարաներով, պիտակավորված:

Մինչև պահեստավորման վայր տեղափոխման և բեռնաթափման ապահովում:

Այդ հրավերին հայտ է ներկայացրել «Հրաշք Այգի» ՍՊԸ-ն հրավերի 6.1 արձանագրությամբ ներկայացրել է առաջարկվող ապրանքը հետևյալ տեխնիկական բնութագրով՝ 250 գ/լ ցիպերմետրին ազդող նյութով կոնտակտ և աղիքային ազդեցության բույսերի պաշտպանության միջոց (միջատասպան)՝ գրանցված «Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների» անվանացանկում (Տրիումֆ առևտրային անվանումով):

Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա:

Վտանգավորության դասը՝ 2-րդ (միջին թունունակ), ըստ ԱՀԿ-ի դասակարգման:

Փաթեթավորված գործարանային 1 լիտրանոց տարաներով, պիտակավորված:

Արտադրված 2017 թվականի մարտին:

Պիտանելիության ժամկետը՝ մարտ 2020թ.:

Մինչև պահեստավորման վայր տեղափոխման և բեռնաթափման ապահովում:

«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/30» ծածկագրով հրավերին ներկայացված «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հայտով ընկերությունը որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից 25.05.2018թ. կնքել է ՀՀ բնապահպանության նախարարության հետ մատակարարման պայմանագիր, մատակարարել է ապրանքը, որի հիման վրա 25.05.2018թ-ին հանձվել է պահանջվող թունաքիմիկատները և կազմվել են թիվ 1 և 2 արձանագրությունները:

Այսպիսով՝ պատվիրատու ՀՀ բնապահպանության նախարարության «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» և «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/30» ծածկագրերով հրավերին «Հրաշք այգի»ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրով առաջարկվել է միևնույն ապրանքը, որը պատվիրատուի կողմից ընդունվել է առանց առարկության, այսինքն առաջարկված ապրանքը «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրով պահանջված ապրանքի տարբերությունը չի ազդել ապրանքի արդյունավետության կամ որակի վրա, ավելին իրավական ակտերով կամ ստանդարտներով ներառված պահանջներին չի հակասել, հակառակ դեպքում «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնմանը առաջարկված միևնույն ապրանքը պատվիրատուի կողմից չէր ընդունվի:

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա»:

Վերոգրյալ իրավանորմի և փաստական հանգամանքների վերլուծությունը փաստում է, որ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով պահանջվող ապրանքի տեխնիկական բնութագրով պահանջված ապրանքի 5-20 լիտր տարաներով և 2017 թվականի չորորդ եռամսյակի արտադրության պահանջները հիմնված չեն եղել իրավական ակտերի պարտադիր պահանջների վրա:

Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է «Հրաշք այգի» ՍՊԸ-ին չընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Միաժամանակ խնդրել է գործի օբյեկտիվությունն ու լրիվությունն ապահովելու համար Պատվիրատուից պահանջել տեղեկատվություն՝ թե որ իրավական ակտի հիման վրա է սահմանված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնման առարկայի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջված 5-20 լիտր տարաներով և 2017 թվականի չորորդ եռամսյակի արտադրության պահանջները:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/109 ընթացակարգի շրջանակներում 20.07.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, նշելով նաև, որ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում անհամապատասխանություններ հայտնաբերելուց հետո գնահատող հանձնաժողովը Ընկերությանը չի ծանուցել և հնարավորություն չի տվել շտկել առկա անհամապատասխանությունները:

3. <u>ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.07.2018թ. թիվ 01.3/11/504047-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից անտառային վնասատուների դեմ պայքարի միջոցառումների ծրագրի շրջանակներում թունանյութի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հայտը գնահատող

հանձնաժողովի կողմից գնահատվել է անբավարար և մերժվել՝ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 48-րդ կետի 2-րդ ենթակետի, քանի որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով նախատեսվածին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/109 ընթացակարգի շրջանակներում 20.07.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/109 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար թունանյութի ձեռքբերման համար հայտարարվել է «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հրաշք այգի» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 03.05.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը «Հրաշք այգի» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով 07.05.2018թ. ծանուցել է հայտնելով, որ ներկայացված տեխնիկական բնութագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել հրավերի տեխնիկական բնութագրին և մատակարարման համար առաջարկել հրավերով նախատեսված ապրանքը:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին:

5. <u>ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.07.2018թ. թիվ 03/26-3/12872-18 գրությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 10.07.2018թ. թիվ 01.3/11/504047-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Հրաշք այգի» ՍՊԸ-ի գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ»

պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: ***<u>Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Նույն կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված

ժամկետում չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար թունանյութի ձեռքբերման համար հայտարարվել է «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որի հրավերով նախատեսվել է գնման առարկայի հետևյալ տեխնիկական բնութագիրը.

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը
1	Թունանյութ	ցանկացած	250 գ/լ ցիպերմետրին ազդող նյութով կոնտակտ և աղիքային ազդեցության բույսերի պաշտպանության միջոց՝ գրանցված «Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված բույսերի պաշտպանության քիմիական և կենսաբանական միջոցների» անվանացանկում: Արտադրված առնվազն 2017 թվականի 4-րդ եռամսյակում: Պատրաստուկային ձևը՝ միջին թունունակ (2-րդ դաս, ըստ ԱՀԿ-ի դասակարգման): Չափածրարված և/կամ փաթեթավորված գործարանային 5-20 լիտրանոց տարաներով, պիտակավորված: Մինչև պահեստավորման վայր տեղափոխման և բեռնաթափման ապահովում:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Հրաշք այգի» ՍՊԸ-ն:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում կամ գերազանցում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 02.05.2018թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ «Հրաշք այգի» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին 03.05.2018թ. սահմանված կարգով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետի 3.1-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

«Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից հայտի թիվ 6.1 հավելվածով ներկայացվել է առաջարկվող ապրանքի հետևյալ նկարագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի		
	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագրերը
1.	Թունանյութ	Հնդկաստան	Տրիումֆ – կոնտակտ-աղիքային ազդեցության միջատասպան է: Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա: Ազդող նյութը՝ ցիպերմետրին 250 գ/լ: Վտանգավորության դասը՝ 2-րդ (միջին թունունակ): Փաթեթավորումը՝ 1 լիտրանոց տարաներով, պիտակավորված: Արտադրության ժամկետը՝ մարտ 2017թ.: Պիտանելիության ժամկետը՝ մարտ 2020թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը «Հրաշք այգի» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով 07.05.2018թ. ծանուցել է հայտնելով, որ ներկայացված տեխնիկական բնութագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել հրավերի տեխնիկական բնութագրին և մատակարարման համար առաջարկել հրավերով նախատեսված ապրանքը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.05.2017թ. ժամը 15:00-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրին. մասնավորապես առաջարկվում է թունանյութ 5-20 լիտրանոց տարաներով փաթեթավորման փոխարեն մեկ լիտրանոցներով և արտադրված առնվազն 2017 թվականի 4-րդ եռամսյակի փոխարեն՝ 2017 մարտ ամսի արտադրանք:

Այսպես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը ***գնահատում է*** սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

Նույն հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Կարգի 46-րդ կետը սահմանում է, որ Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: ***Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:***

Այսպիսով՝ վերոհիշյալ նորմերի համաձայն հայտերը՝ այդ թվում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հրավերով նախատեսված փաստաթղթերը

գնահատվում են ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից: Ընդ որում՝ ապրանքների գնման դեպքում ***հանձնաժողովը գնահատում է*** նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում ***<u>հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:</u>***

Ուսումնասիրելով «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, արձանագրում եմ, որ հայտերի գնահատման արդյունքներով կազմված գնահատող հանձնաժողովի արձանագրության մեջ Կարգի 46-րդ կետի համաձայն չեն արձանագրվել «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագրի՝ հրավերի պահանջների նկատմամբ որևէ անհամապատասխանություն:

Կարգի 47-րդ կետը սահմանում է, որ ...ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը «Հրաշք այգի» ՍՊԸ-ին էլեկտրոնային եղանակով 07.05.2018թ. ծանուցել է հայտնելով, որ ներկայացված տեխնիկական բնութագիրն անհրաժեշտ է համապատասխանեցնել հրավերի տեխնիկական բնութագրին և մատակարարման համար առաջարկել հրավերով նախատեսված ապրանքը: Միևնույն ժամանակ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 46-րդ կետի համաձայն ի սկզբանե չեն արձանագրվել անհամապատասխանություններ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում, որից հետո միայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Կարգի 47-րդ կետի հիման վրա կարող էր ծանուցել Ընկերությանը: Տվյալ դեպքում առկա է միայն գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկված ծանուցումը ուղղված Ընկերությանը, մինչդեռ հայտերը հրավերի պահանջների

նկատմամբ գնահատելու, այդ թվում անհամապատասխանություն արձանագրելու լիազորությունը վերապահված է բացառապես գնահատող հանձնաժողովին:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 46-րդ կետի համաձայն Հրաշք այգի» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագրում գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված կարգով անհամապատասխանություններ չեն արձանագրվել և Կարգի 47-րդ կետի համաձայն շտկելու հնարավարություն Ընկերությանը չի տրվել: Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 07.05.2018թ. ուղարկված ծանուցմանը, ապա գտնում եմ, որ այն չի կարող դիտվել Կարգի 47-րդ կետի իմաստով ծանուցում, քանի որ այն իրականացվել է առանց գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանություններ արձանագրելու:

Այսպիսով հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/29» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.07.2018թ. թիվ 03/26-3/12872-18 գրությամբ «Հրաշք այգի» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 01809336) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**